

## Բաֆֆեթի կոշտ հայտարարությունները

Սամվել Չաբարյան, «Գանձկեն Ֆայնեշլ» փոխնախագահ

Ամերիկյան միլիարդատեր Ուորեն Բաֆֆեթը համարում է, որ բազմաթիվ ընկերություններ, որոնք կորուստներ են կրում վարկային ճգնաժամից, արժանի չեն, որ վերջիններիս կորուստների մասին հոգան այլոք:

Իրեն կողմից ղեկավարվող ներդրումային Berkshire Hathaway Inc. ընկերության ամենամյա ժողովի մամլո ասուլիսում Բաֆֆեթը հայտնեց, որ գերշահույթների հետևից ընկած ֆինանսական ընկերությունները հիփոթեքային փոխառությունների բազայի հիման վրա կառուցելով բարդ վարկային գործիքներ հիմնականում արժանի էին ստացված կորուստներին:

Հայտնի ներդրողը նաև նշեց, որ կառավարությունը չպետք է օգնի այն ներդրողներին, ովքեր վերավաճառում էին պարտքային պարտավորությունները՝ չհասկանալով դրանց պայմանները:

Բաֆֆեթը, ում շատերը ճանաչում են իբրև «ներդրումային գուրու», Ֆորբս ամսագրի վարկածով հանդիսանում աշխարհի ամենահարուստ մարդը: Berkshire Hathaway-ի ղեկավարի ամենամյա մամլո ասուլիսը հավաքում է տասնյակ հազար մարդ:

Չնայած կոշտ հայտարարություններին, Բաֆֆեթը համարում է, որ գլոբալ վարկային ճգնաժամը գնում է դեպի թուլացում, իսկ Դաշնային պահուստային համակարգը կարողացավ կանխել սոր սնանկություններ, կազմակերպելով Bear Stearns Cos.-ի փրկությունը:

«Wall Street-ի ճգնաժամի ամենավատ ժամանակները մոտեցել են ավարտին», հայտնեց Բաֆֆեթը Berkshire Hathaway Inc. բաժնետերերի ամենամյա ժողովի Նախօրյախի Bloomberg հեռուստաալիքին տված իր հարցազրույցում: «Սակայն այն մարդկանց մոտ, որվեր վերցրել են հիփոթեքային վարկեր, դեռ առկա են բազմաթիվ ցավոտ հիմնախնդիրներ»:

«Անհանգստության հիմնական պատճառը այն է, որ կարող է գործարկվել «դոմինոյի սկզբունքը»՝ դա իսկապես կդառնար մեծ հիմնախնդիր», նշեց Բաֆֆեթը: «Եթե Bear Stearns-ը սնկանար, ապա հաջորդ օրը նրան կհետևեր մեկ այլը: Իրավիճակը կլիներ շատ և շատ քառսային»:

2007թ. դեկտեմբերին Բաֆֆեթը ստեղծեց Berkshire Hathaway Assurance-ը՝ որպես պատասխան վարկային ճգնաժամին: 2008թ. 1-ին եռամսյակում Berkshire Hathaway Assurance-ը 278 գործարքներից ստացավ 400 մլն ԱՄՆ դոլարից ավելին խրախուսական պարգևներ, հայտարարեց Բաֆֆեթը Berkshire Hathaway Inc. բաժնետերերի ամենամյա ժողովի ժամանակ: Նրա գնահատականներով սա ավելին է, քան հավաքեցին իր բոլոր մրցակիցները միասին:

Իսկ մինչ այդ, Քոնսեթթիկուտ Նահանգի դատախազ Ռիչարդ Բյումենթալը սկսեց հետաքրքրությունների հնարավոր կոնֆլիկտի մի գործի քննությունը՝ Berkshire Hathaway-ը տիրապետում է Moody's Corp.-ի 20% բաժնետոմսերին, որի դուստր ընկերությունը՝ Moody's Investors Service-ը շնորհում է վարկային վարկանիշներ Էմիտենտներին և վարկային գործիքներին և որը Berkshire Hathaway Assurance-ին շնորհեց ամենաբարձր AAA վարկանիշը: «Սա հետաքրքրությունների հստակ և ուղղակի կոնֆլիկտ է», հայտարարեց Բյումենթալը:

«Եթե մենք փորձեինք ճնշում գործադրել Moody's-ի վրա, ապա դա սխալ կլիներ, սակայն այդպիսի բան երբևիցե չի եղել», հայտարարեց Բաֆֆեթը Bloomberg-ին տված հարցազրույցում ամենամյա ժողովի Նախօրյակին: «Ես Moody's-ի ղեկավարության հետ կոնտակտ չունեմ: Չեմ կարող հիշել անգամ, որ ես որևէ անգամ զանգահարած լինեմ նրանց կյանքում»:

«Berkshire-ը պասիվ ներդնող է, որը երբևէ չի կապվել մեզ հետ վարկանիշների հետ կապված», հայտարարեց Moody's-ի ներկայացուցիչ Թոնի Մայրենդան:

«Berkshire Hathaway-ը դարձել է այնքան մեծ ընկերություն, որ նրա ֆինանսական արդյունքների վրա ազդող օբյեկտներ գնտնելը ներդրումների տեսակետից դարձել է շատ բարդ գործ», նշեց Բաֆֆեթը:

Բաֆֆեթի խոսքերով, երկարաժամկետ սպասումների տեսակետից ևս ուրախ կլինեք բաժնետոմսերի պորտֆելից ստանալ ավելին քան 10 տոկոս տարեկան եկամուտ, բայց ևս կասկածում է, որ դա հնարավոր է: Նույն Berkshire Hathaway-ի բաժնետոմսերի գինը նույնպես դժվար թե կարող է աճել այդպիսի բարձր տեմպերով, կարծում է ևս:

«Մենք գերադասում ենք ձեռքերել խոշոր, բարձրակարգ ընկերություններ և երկար ժամանակով «նստել» դրանց վրա», ասաց ևս: «Սակայն այդպիսի գործարքները չեն բերի այդքան բարձր եկամուտներ», զգուշացրեց ևս, «իսկ ևս, ով հույսը դրել է դրա վրա, պետք է վաճառի իր Berkshire Hathaway-ի բաժնետոմսերը»: